Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ
ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1918—1920 թթ.)

ԵՐԵՎԱՆ

Изговорено у Крагујевцу
Дипломирао 6-62
9.07-98 г.

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. М. АКОПЯН

ПАРЛАМЕНТ АРМЕНИИ
И
ПОЛИТИЧЕСКИЕ ПАРТИИ
(1918—1920 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН 1998

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ
ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(1918—1920 թթ.)

A II 84736

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1993

ԳՄԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(22)52
Հ 177

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ.
թեկնածու Պ. Մ. ՄԱՅԻԼՅԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մ., *Հայաստանի խորհրդարանը և քա-*
Հ 177 *ղաքական կուսակցությունները (1918—1920 թթ.),*
պատ. խմբ. Պ. Մ. Մայիլյան.—Եր.: ՀՀ ԳԱԱ «Գի-
տություն» հրատ., 1998, 41 էջ:

Գրքույկը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական համակարգի երկու կարևոր կառույցների՝ խորհրդարանի և քաղաքական կուսակցությունների պատմության լուսաբանմանը: Ընդհանուր գծերով քննության են առնված խորհրդարանի օրինաստեղծ աշխատանքի, իշխանության մարմինների տարանջատվածության, կուսակցությունների խորհրդարանական և արտախորհրդարանական գործունեության հիմնահարցերը: Հանրագումարի են բերված խորհրդարանի և կուսակցությունների գործունեության արդյունքները, դրանց պատմական փորձն ու դասերը:

Նախատեսված է պատմաբանների, իրավաբանների և, ընդհանրապես, հայոց պատմությամբ հետաքրքրվողների համար:

Հ $\frac{0503020913}{703\ (02)-98}$ ԳՄԴ 63.3(22)52

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1998

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին տեղի ունեցած արմատական փոփոխությունները նոր խնդիրներ դրեցին պատմաբանների առջև: Մասնավորապես Հայաստանի անկախության վերականգնումից հետո անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել հեռավոր ու մոտիկ անցյալի հայոց պետականությունների պատմությունը, դրանց պատմական փորձն ու դասերը: Այդ տեսակետից առանձնակի նշանակություն է ստանում Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական համակարգի ուսումնասիրումը: Առաջին հանրապետության քաղաքական համակարգի կարևոր կառույցներից են նրա խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները: Նկատի ունենալով, որ Հայաստանի նորանկախ հանրապետության քաղաքական համակարգում ևս կարևոր տեղ են գրավում խորհրդարանը՝ Ազգային ժողովը, ինչպես նաև նրանում գործող կուսակցական խմբակցությունները, այստեղից էլ ինքնին հասկանալի է դառնում, թե որքան արդիական ու հրատապ նշանակություն է ստանում Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի և այնտեղ գործող քաղաքական կուսակցությունների պատմական անցյալի ու փորձի բազմակողմանի ուսումնասիրումը և ընդհանրացումը, որոնք, անկասկած, ունեն գիտագործնական ու ճանաչողական նշանակություն մերօրյա անկախ պետականության պետահիրավական ու քաղաքական կառույցների ձևավորման, ամրակայման և զարգացման գործում:

Չնայած թեմայի կարևորությանը և արդիականությունը՝ խորհրդահայ պատմագրության մեջ մեր կողմից առաջ քաշված հիմնահարցերը՝ գաղափարաքաղաքական նկատառումներով, ըստ էության գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Հայաստանի խորհրդարանի և հայ քաղաքական կուսակցությունների 1918—1920 թթ. պատմության վերաբերյալ չկան հատուկ, ընդհանրացնող ուսումնասիրություններ նաև սփյուռքում և սա առաջին փորձն է այդ ուղղությամբ: Գոյություն ունեցող աշխատություններից կարելի է առանձնացնել, թերևս, միայն Ա. Խոնդկարյանի «Օպոզիցիան հանրապետական Հայաստանում» հուշերի հոդվածաշարը[1], որտեղ, սակայն, նկատվում են կողմնակալ միտումներ:

Հայ իրականության մեջ պառլամենտարիզմի գաղափարը, ինչպես հայտնի է, առաջին անգամ արծարծվել է XVIII դարում, հեռավոր Հնդկաստանում Ճ. Շահամիրյանի գլխավորած հայ հայրենասերների Մադրասի խմբակի կազմած ու 1773 թ. հրապարակած «Որոգայթ փառաց» գրքում: Նրանում ապագա ազատագրված Հայաստանի բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ խորհրդարանը կոչվում էր **«Տուն Հայոց»**: Ամերիկյան սահմանադրությանը հաստակակից այս փաստաթղթում առաջնությունը տրվում էր օրենքի գերակայությանը՝ որպես ժողովրդի կամքի արտահայտություն. «Օրենք մեր եղիցին տէր և թագավոր մեր»[2]:

Արդեն XIX դարում սահմանադրական-խորհրդարանական գործունեության առաջին նախաքայլը կարելի է համարել 1860 թ. արևմտահայերի ազգային սահմանադրությունը: Այս յուրօրինակ սահմանադրություն անվանվող փաստաթղթի համաձայն՝ սկսեց գումարվել աշխարհիկ և հոգևոր 140 պատգամավորներից (երեսփոխան-

---

[1] Տե՛ս «Վեմ», Փարիզ, 1933, թիվ Ա, Բ, 1934, թիվ Գ, Ե, Զ:

[2] «Որոգայթ փառաց», Մադրաս, 1773, էջ 89:

ներից) կազմված **Ազգային ընդհանուր ժողովը**[3], որը զբաղվում էր օսմանյան Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող արևմտահայ համայնքի ներքին կյանքի, ազգային, կրոնական, կրթամշակութային և այլ գործերով ու խնդիրներով:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը մեծ փոփոխություններ ու հասարակական-քաղաքական տեղաշարժեր առաջացրեց հսկայածավալ Ռուսական կայսրությունում, այդ թվում նաև Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում: Սկսվեցին առաջին քայլերը երկրի ժողովրդավարացման ուղղությամբ: Զարթոնք ապրեց ազգային կյանքը, աճեց ազգային ինքնագիտակցությունը: Սոցիալ-դեմոկրատ Գ. Ղարաջյանի վկայությամբ երկրամասում ազգային գործոնն ավելի ուժեղ թափով արտահայտվեց, քան սոցիալականը[4]: Քաղաքական գործունեության լայն ասպարեզ իջան հայ քաղաքական կուսակցությունները, որոնցից ազդեցիկը, անկասկած, ՀՀ Դաշնակցությունն էր[5]:

Հայ քաղաքական կուսակցությունների (ՀՀ Դաշնակցություն, ՍԴ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար, Հայ ժողովրդական, Սոցիալ-դեմոկրատ, Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ), «Սպեցիֆիկ») նախաձեռնությամբ նախապատրաստվեց և 1917 թ. աշնանը Թիֆլիսում գումարվեց արևելահայերի համագումարը (համախորհրդակցությունը), որի աշխատանքների վերջում բազմակուսակցական հիմքի վրա ընտրվեց 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ **Հայոց Ազգային խորհուրդ:** Կուսակցությունների քաղաքական կշռին համապա-

---

[3] Տե՛ս Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, էջ 746, Ֆաբուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), հ. Ա, (հավելված), Թիֆլիս, 1912, էջ 76:

[4] Տե՛ս Գ. Ղարաջյան, Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թ., Թիֆլիս, 1919, էջ 16:

[5] Տե՛ս «Кавказ», 1917, թիվ 140, «Մշակ», 27 հունիսի 1917 թ.:

տասխան Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնում էին ՀՀԴ՝ 6, ՀԺԿ՝ 2, Սոց.-դեմ.՝ 2, Էսէռ՝ 2 և անկուսակցական՝ 3 անդամներ[6]: Խորհրդի նախագահն էր Ա. Սհարոնյանը (ՀՀԴ): Հայոց Ազգային խորհուրդը, որպես գործադիր մարմին, փաստորեն ստանձնեց արևելահայ հատվածի քաղաքական ղեկավարությունը: Բացի Ազգային խորհրդից, դարձյալ կուսակցական համամասնության սկզբունքով, կազմվեց նաև 35 հոգուց բաղկացած օրենսդիր մարմին՝ **Ազգային Ժողով,** որը արևելահայության ժամանակավոր ներկայացուցչական մարմինն էր: Տեղերում հիմնվեցին և գործում էին տեղական հայ ազգային խորհուրդներ: Հատկանշական է, որ թե՛ Հայոց Ազգային խորհրդում և թե՛ Ազգային ժողովում հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում հանդես են եկել ազգային միացյալ ճակատով:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը արմատապես փոխեց իրադրությունը Անդրկովկասում, ի վնաս հայ ժողովրդի բաղձալի ակնկալիքների ու ցանկությունների: Դեպքերն այնպիսի անհպատ ընթացք ունեցան, որ Կովկասյան ռազմաճակատը քայքայվեց, Թուրքիան ամբողջ հարձակման և ներքին ու արտաքին ազդակների թելադրանքներով Անդրկովկասը կտրվեց Ռուսաստանից ու անկախացավ:

Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն նպաստեց, մի կողմից Անդրկովկասյան իշխանությունների (Կոմիսարիատի և Սեյմի) ոչ ներդաշնակ քաղաքականությունը, որում սադրիչ ու հրահրող դեր էր խաղում օսմանյան Թուրքիան, իսկ մյուս կողմից, արդեն սկսված քաղաքացիական կռիվների պատճառով, Անդրկովկասի կտրվելը խորհրդային կենտրոնից ու հատկապես խորհրդային նա-

---

[6] Տե՛ս ՀՀ պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ. 222, ց. 1, գ. 16, թ. 58, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1—2, էջ 104:

ռավարության հիասթափեցնող արտաքին քաղաքականությունը, որի արտահայտությունը Բրեստի հաշտության պայմանագիրն է: Այդ պայմանագիրը հիմք հանդիսացավ Թուրքիային Անդրկովկաս ներխուժելու համար:

1918 թ. գարնանը՝ մայիսին, ծագած ներքին սուր հակասությունների հետևանքով Անդրկովկասյան դաշնությունը քայքայվեց և դրա փլատակների վրա առաջացան Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ հանրապետությունները: Այդ նույն օրերին հայ ժողովուրդն ունեցավ իր երկրորդ Ավարայրը, մայիսվերջյան հաղթական շաբաթը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը:

Հիրավի, 1918 թ. մայիսյան տագնապալի օրերին հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով կարողացավ ճնշումն արժանի հակահարված տալ և վիժեցնել ամբողջ Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքական ծրագրերը: Ավելին, հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Չնայած անկախությունը եկավ արագ և անսպասելի, սակայն այն ուներ իր ներքին տրամաբանությունը: 1918 թ. առաջին հանրապետության անկախության փորձը հուշում է, որ ազատությունը և անկախությունը ոչ թե ստանում են նվիրատվությամբ, այլ նվաճում են արյամբ: Ըստ արժանվույն պետք է գնահատել «մայիսի 28-ի» անկախության մասին Հայոց Ազգային խորհրդի ընդունած պատմական որոշումը, քանզի, եթե տվյալ պահին չընդունվեր նման վճիռ ու Ազգային խորհուրդը իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանություն, ապա հայապատկան գավառները պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցի թաթարներին և վրացիներին: Այնպես որ Հայաստանի անկախության ակտը

պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմանների մեջ չուներ այլընտրանք:

Մեծ խորհուրդ կա «մայիսի 28-ի» և «սեպտեմբերի 21-ի» միջև: Վերջինս առաջինի իրավահաջորդն է և հոգեհարազատ ժառանգորդը: Առանց առաջին հանրապետության, ամենայն հավանականության, չէր լինի հետ այսօրվա հանրապետությունը, առանց Հայաստանի առաջին խորհրդարանի, հավանաբար չէր լինի ներկայիս խորհրդարանը:

Այսպիսով, պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությամբ՝ 1918 թ. մայիսին Հայաստանը կանգնեց անկախության փաստի առջև: 80 տարի առաջ՝ 1918 թ. մայիսի 28-ին, Հայաստանի մի փոքր հատվածում, ընդամենը 12 հազար քառ. կմ-ի վրա, վերականգնվեց շուրջ 600 տարի առաջ նորոգված հայոց ազգային պետականությունը:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության մասին պատմական որոշումից և հունիսի 4-ին Հայաստանի և Թուրքիայի միջև կնքված Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Հայոց Ազգային խորհուրդը ու հայ քաղաքական շրջանակները ձեռնամուխ եղան պետական իշխանության մարմինների, այդ թվում անդրանիկ խորհրդարանի ձևավորմանը:

1918 թ. հուլիսի երկրորդ կեսին Թիֆլիսից մայրաքաղաք՝ Երևան ժամանած Հայոց Ազգային խորհրդի անդամների և Հ. Քաջազնունու գլխավորած անդրանիկ կառավարության միջև տեղի ունեցած միջկուսակցական խորհրդակցություններից հետո ձևավորվեց Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, որը պաշտոնապես կոչվեց **Հայաստանի խորհուրդ:** Քանի որ ժամանակը և քաղաքական հանգամանքները թույլ չէին տալիս միանգամից խորհրդարանի ընտրություններ անցկացնել, որոշվեց՝ Հայոց Ազգային խորհրդի անդամների (15) թվի, կուսակցական համամասնությամբ եռապատկելու (բացի երեք անկուսակցականների), ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ հրավիրելու միջոցով կազմել Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը)[1]: Ահա այս ճանապարհով Հայաստանի

---

1 Տե՛ս «Հորիզոն», 27 հուլիսի 1918 թ.:

խորհրդում պատգամավորական տեղեր գրաղեցրին. ՀՀ դաշնակցությունը՝ 18, Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ)՝ 6, Սոցիալ-դեմոկրատները՝ 6, Սոցիալիստ-հեղափոխականները (էսէռները)՝ 6, անկուսակցական՝ 2, ազգային-էթնիկական ներկայացուցիչներից՝ 6 թուրք, 1 ռուս և 1 քուրդ (եզդի)՝ ընդամենը 46 անդամ[2]:

Խորհրդարանի առաջին նիստը գումարվեց 1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում՝ քաղաքային ակումբի շենքում, Ավետիք Սահակյանի (ՀՀԴ) նախագահությամբ: Հաստատվեցին պատգամավորների մանդատները և խորհրդի աշխատակարգը, ընտրվեց նախագահություն: Հաջորդ երկու նիստերում լսվեց և ձայների մեծամասնությամբ հավանության արժանացավ Հ. Քաջազնունու կառավարության հայտագիրը: Վերջինս Հայաստանի վիճակը բնութագրում էր որպես «անձև քաոս և ավերակների կույտ»: Այնտեղ ուղիներ էին մատնանշվում ստեղծված իրավիճակից դուրս գալու և երկրի կայունությունը որոշ չափով կայունացնելու ուղղությամբ[3]:

Դարձյալ կուսակցական համամասնությունը պահպանելու սկզբունքով կազմվեցին խորհրդարանի 15 հանձնաժողովները, որոնց մեջ գերիշխում էին սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներով զբաղվող հանձնաժողովները[4]: Հայաստանի խորհրդի առաջին ամիսների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմին էր, այլև ուներ գործադիր իշխանության ֆունկցիաներ: Խորհուրդը հաճախ իր հանձնաժողովների՝ կարգադրիչ, պարենավորման, գաղթականության, բժշկասանիտարական, դպրոցական և այլն միջոցով փաստորեն տնօրինում էր կառավարչական

---

[2] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 2, «Խոսք», 20 դեկտեմբերի 1918 թ., «Հորիզոն», 27 հուլիսի 1918 թ.:

[3] Տե՛ս «Հորիզոն», 15 օգոստոսի 1918 թ.:

[4] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 16:

բնույթի գործերի, ինչպիսիք էին խոլերայի և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, ժողովրդի պարենավորման, գաղթականների խնամատարության, անօրինական զենքի բռնագրավման և նույնիսկ ժողովրդական կրթության գործերը[5]: Խորհրդարանը հաճախ օրենքների անվան տակ հրապարակում էր վարչական հրահանգներ ու որոշումներ: Խորհրդարանին կից գործում էր պետական վերահսկողության մարմինը, որը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության ֆինանսատնտեսական և այլ գործունեությունների վրա վերահսկողության իրականացման կարևոր լծակներից մեկն էր[6]: Վերահսկողության այդ մարմինը հիշեցնում է մերօրյա Ազգային ժողովի վերահսկիչ պալատը[7]:

Սակայն, երբ ձևավորվեց Հայաստանի խորհրդարանը, այն իր մեջ բովանդակում էր երկրի գերագույն իշխանությունը: Նախագահական համակարգի բացակայության պայմաններում բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ենթակա էր խորհրդարանին, այսինքն՝ Հայաստանը պառլամենտական գերակայությամբ հանրապետություն էր:

Հայաստանի Հանրապետությունում հաշվում էին շուրջ մեկ տասնյակի հասնող քաղաքական կուսակցություններ, սակայն, ինչպես ասվեց, խորհրդարանում պաշտոնապես գործել են չորս կուսակցական խմբակցություններ՝ ՀՀԴ, որը սկզբից մինչև վերջ եղել է կառավարող կուսակցություն և երեք ընդդիմադիր կուսակցությունների խմբակցություններ՝ ՀԺԿ, Սոց.-դեմոկրատական (մենշևիկ և բոլ-

---

5 Տե՛ս «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918—1919 թթ.», մաս 1, Ե., 1919, էջ 1—2, «Ժողովուրդ», 8 սեպտեմբերի 1918 թ. և այլն:

6 Տե՛ս Ա. Խանդկարյան, Ցարական հանրապետական Հայաստանում («Վեմ», 1934, թիվ 2, էջ 74):

7 Տե՛ս «ՀՀ սահմանադրությունը», Երևան, 1995, էջ 39, Հ. Խաչատրյան, Պառլամենտ և պատգամավոր, Երևան, 1994, էջ 46:

շևիկ) և Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ): Այն բանից հետո, երբ 1918 թ. նոյեմբերի սկզբին ՀԺԿ-ը ՀՀԴ հետ միասին կազմեց կոալիցիոն (խառը) կառավարություն, այն դադարեց ընդդիմություն լինելուց: Եվ այս վիճակը շարունակվեց մինչև 1919 թ. հունիսի սկիզբը, այսինքն՝ մինչև ՀԺԿ ներկայացուցիչների կառավարությունից հեռանալը և խորհրդարանի արձակումը:

Խորհրդարանական կուսակցությունների էությունը լավ հասկանալու և նրանց գործունեությունը ճիշտ բնութագրելու համար դրանք բաժանել ենք երկու խմբի՝ ազգային և ոչ ազգային: Նման բաժանում կատարելիս հիմք ենք ընդունել կուսակցությունների գաղափարախոսությունը, ծրագրային հիմնադրույթները և հետապնդած քաղաքական նպատակները: Ըստ այդ բաժանման՝ խորհրդարանում ներկայացված ազգային կուսակցություններն էին ՀՀԴ և ՀԺԿ, իսկ ոչ ազգային՝ հայ սոցիալ-դեմոկրատները (5 մենշևիկ և 1 բոլշևիկ) և հայ էսէռները (սոց.-հեղափոխականները):

Նման տարբերակումից բացի, խորհրդարանական խմբակցությունները բաժանել ենք երեք ուղղության՝ «աջակողմյան» (ՀԺԿ), «կենտրոն» (ՀՀԴ) և «ձախակողմյան» (Սոց.-դեմ. և Էսէռ): Այս առումով ձախակողմյան կուսակցություններին բնորոշ էր դասակարգային աշխարհայացքը, իսկ աջակողմյանին ու կենտրոնականին՝ ազգային գաղափարախոսությունը: Եթե աջակողմյան թևն ուներ հակասոցիալիստական, մասնավոր սեփականատիրական և ազատականացված տնտեսական ուղղվածություն, ապա ձախակողմյանը, ընդհակառակը, պաշտպանում էր արտադրության խոշոր միջոցների պետականացման և ընդհանրապես պետական կառավարման գերակայությունը: Ինչ վերաբերում էր ՀՀԴ, այն իր սոցիալիստական ծրագրային պահանջներով մոտենում ու նմանվում էր ձախերին, բայց գործնական քաղաքականության բնագավառում ցուցաբերում էր անհետևողականություն և ավելի շատ պաշտպանում սեփականության բազմազանությունը և

տնտեսավարման ազատությունը: Վերոհիշյալ երեք թևերի չորս խմբակցություններից երեքը (ՀԺԿ, Սոց.-դեմ. և Էսէռ) ի սկզբանե գրավեցին ընդդիմադիր դիրք: Ընդդիմությունը կանգնած էր «աջ» և «ձախ» թևերում:

Չնայած «աջ»՝ ժողովրդականները նույնիսկ կոալիցիոն կառավարության ժամանակ մշտապես ներքին ընդդիմության և մրցակցության մեջ էին «կենտրոն»՝ ՀՀԴ հետ, սակայն սրանց ընդդիմությունը ավելի կառուցողական էր, քան «ձախերինը», որոնք այնքան էլ կողմնակից չէին հայոց անկախ պետականության գաղափարին: Ձախակողմյան խմբակցությունների հիմնական գործելակերպը հարցապնդումներն էին[8]: Խորհրդարանական քննարկումների ժամանակ ձախերին ավելի հետաքրքրում ու մտահոգում էին սոցիալ-տնտեսական (աշխատանքի, գաղթականության, պարենավորման, կրթամշակութային և այլ) բնույթի հարցերը, քան համազգային՝ հայկական հարցի, ինքնապաշտպանական, բանակի, սահմանների ամրացման և համանման հիմնախնդիրները:

Պետք է ասել, որ սոցիալական թույլ հենարանի պատճառով «ձախ» կուսակցությունները առանձնապես ազդեցիկ քաղաքական ուժ չէին ՀՀ-ում: Բացի այդ, նրանք թույլ էին կազմակերպական կառուցվածքի տեսակետից: Խնդիրն այն է, որ մինչև 1918 թ. վերջերը (նոյեմբեր) հայ սոցիալ-դեմոկրատները տակավին կազմակերպական առումով չէին անջատվել Սնդրկովկասի, ասել է թե՝ վրաց սոց.-դեմ. մենշևիկներից[9]: Հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ նաև Երևանի բոլշևիկների կազմակերպչական առումով անջատումը մենշևիկներից[10]: Իսկ էսէռները Հա-

---

8 Տե՛ս «Հորիզոն», 23 օգոստոսի 1918 թ.:

9 Տե՛ս «Մշակ», 21 նոյեմբերի 1918 թ., «Նոր հորիզոն», 28 նոյեմբերի 1918 թ.:

10 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 279:

յաստանի սահմաններում իրենց կուսակցության իրավասու մարմինը՝ Հայաստանի կոմիտեն հիմնեցին 1919 թ. փետրվար ամսին[11]:

Արտախորհրդարանական կուսակցություններից էին Հայ սահմանադիր ռամկավարները, Սոց.-դեմ. հնչակյանները, «Սպեցիֆիկները» և այլն, որոնք նույնպես հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում առանձնապես շոշափելի կշիռ չեն ունեցել: Սրանք այդպես էլ չունեցան իրենց ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետության խորհրդարանում:

Խորհրդարանում հարաբերական մեծամասնություն ունեցող ՀՀԴ կուսակցությունը ձգտում էր հասնել կայուն մեծամասնության: Եվ երբ 1918 թ. աշնանը սկսվեց կառավարության առաջին ճգնաժամը, այն հաղթահարելու նպատակով ՀՀԴ կուալիցիոն (խառը) կառավարություն կազմեց՝ համաձայնեցնելով ոչ թե «ձախակողմյան» սոցիալիստական կուսակցությունների, այլ «աջակողմյան» բուրժուական որակվող ՀԺԿ հետ՝ դրանով իսկ ընդգծելով իր համար ազգային խնդիրների գերակայությունը սոցիալ-դասակարգայինի նկատմամբ: ՀՀԴ ընդառաջ գնաց Ժողովրդականներին՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները: ՀՀԴ և ՀԺ կուսակցությունները արտաքին քաղաքականության հարցում մերձեցել էին, որովհետև երկուսն էլ Հայկական հարցում, որպես ազգային կուսակցություն, գրեթե միակամ էին, իսկ ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում Դաշնակցությունն իրեն անվանելով «սոցիալիստական», երես դարձրեց իսկական սոցիալիստներից, որովհետև գտնում էր, որ ընկերավարային բարենորոգումները ՀՀ-ում դեռևս անժամանակ են ու չհասունացած[12]: Ամերիկահայ ճանաչված պատմա-

---

11 Տե՛ս «Սոցիալիստ հեղափոխական», Երևան, 21 օգոստոսի 1919 թ.:

12 Տե՛ս «Դրոշակ», 1929, թիվ 4—5, էջ 70:

բան Ռ. Հովհաննիսյանի կարծիքով Դաշնակցությունը Ժողովրդական կուսակցության հետ խառը կառավարություն կազմելու հանձնարարություն տվեց նաև այն դրդապատճառով, որ «ակնկալվում էր ստանալ Արևմուտքի դրամատիրական պետությունների աջակցությունը, որովհետև Դաշնակցության ծրագիրը ընկերավարական էր: Այս խառը պիտի բարձրացներ հանրապետության հեղինակությունը»[13]:

Սակայն ՀՀԴ, ՀԺԿ կառավարախորհրդարանական կոալիցիան կենսունակ չգտնվեց, իսկ 1919 թ. սկզբներից վարչապետ Հ. Քաջազնունին քաղաքական նպատակներով արտասահման գործուղվելով՝ գործնականում հեռացվեց կառավարության ղեկավարի պաշտոնից:

Թեև արտաքին քաղաքականությունը գործադիր իշխանության՝ կառավարության իրավասության ոլորտ է, բայց և այնպես օրենսդրական, նաև քաղաքական մարմնի կարգվածքով խորհրդարանը հաճախ անդրադարձել է այս բնագավառում ծառացած հիմնախնդիրներին: Ամենից առաջ խորհրդարանը արձագանքեց 1918 թ. սեպտեմբերին Բաքվում կատարված հայերի կոտորածին: Խորհրդի հոկտեմբերի 26-ի նիստում որոշվեց Բաքվի աղետյալ հայերին, որպես օգնություն, հատկացնել 500 հազար ռուբլի[14]: Միաժամանակ, խորհրդարանը հիմք ընդունելով էսէռական խմբակցության բանաձևը՝ իր բողոքի ձայնը բարձրացրեց՝ նշավակելու այն գազանությունները, որոնք թուրք վայրենի հրոսակները գործադրել էին Բաքվի խաղաղ հայ ազգաբնակչության նկատմամբ:

Հայաստանի խորհրդարանի և քաղաքական կուսակցությունների համար 1918 թ. վերջերին արտաքին ոլորտի ամենասուր խնդիրներից էր հայ-վրացական սահ-

---

13 «Սասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

14 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 1, 6, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 10:

Ա 84236

մանային վեճը: Խորհրդարանը մի քանի անգամ անդրադարձավ այդ խնդրին և ընդունեց որոշում՝ խաղաղ միջոցներով լուծել Լոռի-Ախալքալաք տարածքային վեճը[15]: Սակայն գործը հասավ երկշաբաթյա զինաբախման: Զազմական գործողությունները դադարեցնելու և կնճիռը հարթելու նպատակով Լոռի մեկնեց խորհրդարանական հանձնաժողով: Նրանում ընդգրկված էին Գ. Տեր-Խաչատրյանը (ՀԺԿ), Մ. Հարությունյանը (ՀՀԴ), Ս. Խաչատրյանը (ՀՀԴ), Ա. Խոնդկարյանը (Էսէռ), Ս. Մամիկոնյանը (անկուս.) և զորավար Ղորղանյանը[16]: Խորհրդարանական պատվիրակությունը, անշուշտ, օգտակար դեր խաղաց արյունահեղության շուտափույթ դադարեցման գործում:)

Աշխարհամարտի հաղթական ավարտից հետո Հայաստանի խորհրդարանի քննարկումների նյութ դարձավ Հայկական հարցը: Թեև Հայաստանը Փարիզի խաղաղության կոնֆերանսին պաշտոնապես հրավիրված չէր, սակայն հանրապետության պահանջներն այնտեղ ներկայացնելու համար դեկտեմբերի 3-ին խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշեց Եվրոպա ուղարկել պատվիրակություն, որի ղեկավար նշանակվեց Ավետիս Ահարոնյանը[17]:

Դարձյալ ՀՀԴ և ՀԺԿ խորհրդարանական խմբակցությունների համաձայնությամբ որոշվեց, որ Փարիզի խաղաղության կոնֆերանս մեկնող պատվիրակության կազմը և նրան տրվելիք հրահանգները պետք է որոշի ոչ թե խորհրդարանը, այլ կառավարությունը:

---

15 Տե՛ս «Հորիզոն», 10 նոյեմբերի 1918 թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 3, էջ 129:

16 Տե՛ս «Ժողովուրդ», 22 դեկտեմբերի 1918 թ.:

17 Տե՛ս R. Hovhannisian, The Republic of Armenia, vol. 1, Berkley, Los Angeles, London, 1971, p. 251, նաև՝ «Լրաբեր», 1994, թիվ 1, էջ 102, «Ժողովուրդ», 4 և 6 դեկտեմբերի 1918 թ.:

1918 թ. դեկտեմբերի 5-ին և 7-ին նախարարների խորհուրդը լսելով վարչապետի զեկուցումը՝ Եվրոպա պատվիրակություն ուղարկելու մասին, որոշեց պատվիրակության կազմը (Ա. Ահարոնյան, Մ. Պապաջանյան, Հ. Օհանջանյան) և հաստատեց առաքելության գործունեության հրահանգը, որը լիազորում էր պաշտպանել միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը[18]:

Դրա դեմ բողոքեցին «ձախերը»[19]: Նրանք իրենց բողոքը հիմնավորում էին նրանով, որ գերագույն իշխանությունը խորհրդարանն է և ոչ թե կառավարությունը, ուստի երկրի ու ժողովրդի համար կանորագույն հարցերի վճռման իրավունքը վերապահվում է խորհրդարանին: «Կենտրոն» և «աջակողմյան» խմբակցությունները անհանգստանալու հիմքեր չունեին, քանզի կառավարության կազմում իրենց ներկայացուցիչներն էին: Վերջիններս սկսեցին ավելի հանախ հաշվի չնստել «ձախակողմյան» խմբակցությունների հետ և պետության ու ժողովրդի համար կարևոր հարցերի լուծումը հանձնել կառավարությանը, որպեսզի «ձախերը» այդ գործում մասնակցության ու միջամտության հնարավորություն չունենան:

Կառավարող և խորհրդարանում մեծամասնություն կազմող «կենտրոն» և «աջակողմյան» խմբակցությունները սկսեցին ավելի հանախակի դիմել նման քայլերի, որպեսզի մեկուսացնեն «ձախերին» երկրի քաղաքական կյանքի դեկավարմանը մասնակցելուց: Ինքնին հասկանալի է, որ նման գործողությունների հետևանքով ինքնաթեղաբար նեղացվում ու սահմանափակվում էր գերագույն իշխանության՝ խորհրդարանի դերը: Խորհրդարանը ձայների մեծամասնությամբ որոշում կայացրեց պատվիրակու-

---

18 Տե՛ս Հ. Ա. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997, էջ 328, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 80, գ. 183, թ. 7: Ալ. Խատիսյան, ՀՀ ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 117:

19 Տե՛ս «Կոչ», 8 դեկտեմբերի 1918 թ.:

թյան նախատեսվելիք ծախսերի համար բաց թողնել 700 հազար ռուբլի վարկ[20]:

Խորհրդարանի գործունեության հիմնական առանցքը, օրինաստեղծ աշխատանքն էր, երկրի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծումը: Հայաստանի խորհուրդը մի կողմից փորձում էր ստեղծել իր սեփական, ազգային բովանդակությամբ օրենքները, իսկ մյուս կողմից՝ ժամանակի սղության և արհեստավարժության պակասի հետևանքով, ընդօրինակում ու հարմարեցնում էր դրսի օրենքները: Քանի որ ՀՀ որպես պետական միավոր անջատվել էր, փաստորեն, նախկին Ռուսական կայսրությունից, ուստի 1918 թ. դեկտեմբերի 6-ին հաստատված օրենքով նպատակահարմար գտան ՀՀ տարածքի վրա ժամանակավորապես պահպանել նախկինում գործող օրենքները՝ որոշ փոփոխություններով ու լրացումներով[21]: Մի շարք օրենքներով քայլեր ձեռնարկվեցին դատական իշխանության ձևավորման ուղղությամբ[22]: Հանրապետությունում օրինականության վերականգնման և կարգուկանոն հաստատելու նպատակով, ներքին գործերի նախարար Արամի ներկայացմամբ, ընդունվեց անօրինական զենքի բռնագրավման և պետականացման մասին օրենքը, որով կառավարությունը հետամուտ էր մի կողմից ամրապնդել երկրի ներքին կայունությունը, իսկ մյուս կողմից՝ բռնագրավված զենքով զինել նորաստեղծ հայկական բանակը: Խորհրդի մի շարք օրենքներ վերաբերվում էին պետական մենաշնորհի ու բռնագրավումների քաղաքականությանը, որոնք, ինչ խոսք, բացասաբար անդրադարձան

---

20 Տե՛ս «Ժողովուրդ», 25 դեկտեմբերի 1918 թ:

21 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 15, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918—1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 22, «Կայծ», 26 դեկտեմբերի 1918 թ.:

22 Վ. Անապոնյան, Դատարանը Հայաստանի Հանրապետության մեջ («Հայրենիք», 1939, թիվ 7, էջ 129—130, «Ժողովուրդ», 13 և 29 դեկտեմբերի 1918 թ.):

տնտեսական կյանքի վրա[33]: Պետական մենաշնորհի ու բռնագրավումների քաղաքականությանը առանձնապես հրանգ էին հաղորդում «ձախերը»: Արխիվային վավերագրերը ցույց են տալիս, թե պետական մենաշնորհի ու բռնագրավումների քաղաքականությունը և դրան ուղեկից չարաշահումները, զեղծումները, առանձին սպառազեն խմբերի կամայականությունները ինչպիսի մեծ չափերի էին հասել[24]:

Հայաստանի խորհուրդը ընդունել է նաև կրթությանն ու մշակույթին վերաբերող օրինագծերի ու օրենքների մի մեծ փաթեթ: Բայց և այնպես հանրապետությունում պակասում էին շատ օրենքներ:

Խորհրդարանի գործունեության կարևոր ոլորտներից էին բյուջեն, ֆինանսավարկային քաղաքականությունը: Հանրապետությունը չի ունեցել տնտեսական ու սոցիալական զարգացման հստակ ծրագիր: Պետական ծախսերը կատարվում էին նախահաշիվների համաձայն, որոնք կազմում էր կառավարությունը և հաստատում խորհրդարանը: Նախատեսվող վարկային հատկացումները ստանում էին օրենքի տեսք: Խորհրդարանի կողմից հաստատված տարեկան նախահաշիվների ամբողջությունն էլ, փաստորեն, կազմում էր հանրապետության տարեկան պետբյուջեն: Սովորաբար ֆինանսական ոլորտը այն գլխավոր լծակն էր, որով խորհրդարանն ազդում էր կառավարության վրա: Տվյալները ցույց են տալիս, որ ծախսերի տասնապատիկ անգամ գերազանցել են եկամուտները:

---

33 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թ. 23, ֆ. 199, ց. 1, գ. 4, թ. 3, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 3, գ. 511, թ. 114, ֆ. 202, ց. 1, գ. 41, թ. 16, «Կառավարության լրաբեր», 16 հոկտեմբերի 1918 թ. և այլն:

24 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 102, թ. 7, ց. 2, գ. 625, թ. 13, ֆ. 202, ց. 1, գ. 102, թ. 1, ֆ. 404, ց. 1, գ. 17, թթ. 1—6, «Հորիզոն», 9 հոկտեմբերի 1918 թ., «Ժողովուրդ», 22 սեպտեմբերի 1918 թ.:

Ինչ վերաբերում է հողային խնդրին, կարելի է ասել, որ թե՛ խորհրդարանը, և թե՛ կառավարությունը հիշյալ խնդրի լուծման ուղղությամբ հետևողական քաղաքականություն չվարեցին: Այստեղ խանգարող հանգամանքներ էին խմբակցությունների խայտաբղետ ագրարային ծրագրերը, ինչպես նաև ժամանակի աղքատությունն ու երկրի սոցիալ-քաղաքական զարգացման անորոշությունը:

Ի տարբերություն դրա՝ խորհրդարանի ուշադրության կենտրոնում է եղել 300 հազարից ավելի գաղթականների և մոտ 40 հազար թափառական ու անօգնական որբերի խնամատարության խնդիրը: Պետական մակարդակով բազմաթիվ օրենքներ են ընդունվել նրանց ֆինանսական ու պարենային օգնության կազմակերպման, աշխատանքի տեղավորման, հողամասեր հատկացնելու, որբերի արհեստագործական ուսուցման ուղղությամբ և այլն[25]: Խորհրդարանում ընկերային բնույթի հարցերով ու հարցապնդումներով ավելի շատ հանդես էին գալիս «ձախակողմյան» խմբակցությունները: Սակայն դրան հակառակ, նրանք դժգոհելով կառավարության արտաքին ու ներքին քաղաքականությունից, հաճախ դեմ էին քվեարկում բանակին և երկրի պաշտպանության նպատակներին վարկեր տրամադրելուն[26]:

Արդեն 1919 թ. սկզբներից բացահայտ դարձան հակասությունները կառավարող (ՀՀԴ և ՀԺԿ) կուսակցությունների և «ձախերի» միջև: 1919 թ. փետրվարին խորհրդարանի դահլիճում նույնիսկ գործը հասավ ծեծկռտ-

---

25 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ., ֆ. 199, ց. 1, գ. 4, թթ. 2—3, գ. 22, թթ. 4, 8, 84, ֆ. 200, ց. 1, գ. 86, թթ. 6—7, 9, 69, ֆ. 202, ց. 1, գ. 333, թթ. 41—42, «Հայաստանի Հանրապետության պետական օրենքները» (1918—1920 թթ.), Երևան, 1998, էջ 9—12, «Զանգ», 25 հունվարի 1919 թ.:

26 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, թթ. 193—194, «Կայծ», 22 և 30 հունվարի, 13 փետրվարի 1919 թ.:

տարի[27]: Իր հերթին ներքին հակասություն կար նաև կազմավորող երկու՝ ՀՀԴ և ՀԺԿ կուսակցությունների միջև, որոնցից մեկը մյուսի նկատմամբ պատասխանատվություն չէր ուզում կրել: Խորհրդի լուծարման համար առիթ հանդիսացավ Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը՝ 1919 թ. մայիսի 28-ին, ձայների մեծամասնությամբ, կառավարության պաշտոնական հայտարարությունը միացյալ և անկախ Հայաստանի հռչակման և Հայաստանի խորհուրդը արևմտահայ 12 ներկայացուցիչներով համալրելու մասին[28]: Այդ հայտագրին բացահայտ դեմ արտահայտվեցին ոչ միայն «ձախերը», այլև Դաշնակցությանն հետ կոալիցիա կազմած Հայ ժողովրդական խմբակցությունը: Այս ակտի գերնպատակը՝ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ կառավարություն գաղափարի՝ որպես պետական քաղաքականության, աստիճանական իրագործումն էր: «Այդ ակտի նպատակն էր,—մտահանգում էր Ս. Վրացյանը,—արագացնել հայ ժողովրդի երկու հատվածների միությունը և հայտարարել ի լուր աշխարհի հայ ժողովրդի անհողդողդ կամքը՝ անկախ պետական կյանքով ապրելու»[29]: Արված հայտարարությունը պետք է ամրապնդվեր գործնական քայլերով: Նախատեսվում էր, բանակցելով արևմտահայ քաղաքական շրջանակների հետ, կազմել միացյալ Հայաստանի կառավարություն և միացյալ խորհրդարան:

Դրան հակառակ Պողոս Նուբար փաշայի գլխավորած արևմտահայ ազգային պատվիրակությունը օտարոտի վերաբերմունք ցուցաբերելով իրական Հայաստանի Հանրա-

---

27 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 35, թ. 1, «Աշխատավոր», 26 մայիսի 1919 թ.:

28 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 114, գ. 27, թ. 213, գ. 56, թ. 15, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 9, «Ժողովուրդ», 11 հունիսի 1919 թ.:

29 Ս. Վրացյան, Բանակցություններ Ազգային պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև, Պոլսում, 1920, էջ 6:

պետության նկատմամբ՝ Տաճկահայաստանի հարցը հակադրում էր ՀՀ-ը: Դրա հիման վրա պատվիրակությունը նույնիսկ դիմակայել է օտար պետությունների կողմից ՀՀ ճանաչմանը՝ գտնելով, որ դա իբր «կարող է թուլացնել Տաճկահայաստանի դատը: Իսկ այդ գործում Նուբար փաշային օգնել է նաև Անդրանիկը»[30]: Պողոս Նուբարը պատճառաբանում էր հետևյալ կերպ. քանի դեռ Ռուսաստանը իր վերջնական խոսքը չի ասել Ռուսահայաստանի խնդրում, ուստի «Տաճկահայաստանի հարցը պետք է անջատ պահել, որպեսզի դաշնակից պետությունները ռուսական հարցը պատճառ չդարձնեն տաճկահայ դատի լուծման ձգձգման համար»[31]: Փաշայի այս բացատրությունից կարելի է հասկանալ, որ նա ուզում էր հասնել Տաճկահայաստանի (հնարավորության դեպքում նաև Կիլիկիայի հետ) ինքնուրույն անկախության հռչակմանը, ինքն էլ դառնար վարչապետ: Այս ակնկալությամբ նույնիսկ կազմվեց կառավարություն, որը, սակայն, մնաց թղթի վրա[32]: Ինքնին հասկանալի է, որ նման հակադիր դիրքորոշումները չէին կարող նպաստել Հայկական հարցի ամբողջական լուծմանը:

Դաշնակցության և Ս. ռամկավարների միջև ծագած քաղաքական այս տարաձայնության հարցում Դաշնակցության հետ կոալիցիա կազմած Ժողովրդական կուսակցությունը միանշանակ պաշտպանեց իր կուսակից ռամկավար Պողոս փաշային:

ՀՀ կառավարության «մայիսի 28-ի» ակտը ներքաղաքական լարված պայքար առաջ բերեց Հայաստանի երկու ազդեցիկ՝ ՀՀԴ և ՀԺ կուսակցությունների միջև: Նրանց միջև սկսված պայքարը դուրս եկավ խորհրդարանի և կառավարության շրջանակներից:

---

30 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 62:

31 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 419:

32 Տե՛ս «Արձագանք», Եկատերինոդար, 10 հունվարի 1919 թ.:

Ժողովրդականները արևմտահայության իրավունքների ու ջանքերի ոտնահարում համարեցին կառավարության հաշտարարության այն հատվածը, որտեղ ՀՀ ներկա կառավարությունն իրեն հռչակում էր «Միացյալ և անկախ Հայաստանի կառավարություն»՝ անտեսելով ազգային պաշտպանության ու նրա ղեկավար Պողոս Նուբար փաշայի գոյությունը: Այստեղ կարելի է կարծել, որ ժողովրդականներին մտահոգում էր ոչ այնքան խնդրի իրավաքաղաքական կողմը, որքան այն, որ միացյալ Հայաստանի կառավարության ղեկին հավակնում էր իրենց կուսակից ու պաշտելի Պողոս Նուբարը: Ժողովրդականները ցանկանում էին այդ բաղձալի պաշտոնում տեսնել ոչ թե դաշնակցականի, այլ ռամկավար Պողոս փաշային: Նշանակում է՝ այս տարաձայնությունների հիմքում ընկած էին ավելի շատ կուսակցական ու անձնական հաշիվներ, քան համապետական ու համազգային գերագույն շահեր:

Այս ամենը առաջ բերեց կառավարախորհրդարանական խոր ճգնաժամ: Ժողովրդականները հատկապես բողոքեցին առանց խորհրդարանի գիտության արևմտահայ 12 ներկայացուցիչների (բոլորն էլ դաշնակցական) խորհրդարան հրավիրելու որոշման դեմ: Անշուշտ, իրավական, էլ չենք ասում բարոյական տեսակետից, պատշաճ չէր ու կառավարության իրավասությունից միանգամայն դուրս էր խորհրդարան պատգամավորներ հրավիրելու մասին որոշում կայացնելը, թեև այդ ժամանակ խորհրդարանի իրավունքները մեկ ամսով հանձնվել էր կառավարությանը: Հասկանալի է, որ կառավարության որոշմամբ 12 թուրքահայ դաշնակցականների մուտքը խորհրդարան ապահովում էր ՀՀԴ կայուն մեծամասնություն խորհրդարանում, որն էլ մեծ անհանգստություն ու վրդովմունք առաջացրեց «աջ» և «ձախ» ընդդիմության շրջանում:

Նման խիստ լարված պայմաններում, 1919 թ. հունիսի 4-ին տեղի ունեցավ խորհրդարանի նիստը, որին

մասնակցում էին նաև արևմտահայ 12 ներկայացուցիչները: Նախապես կազմած հայտարարություններով սկզբում հանդես եկավ Սոց.-դեմ. խմբակցության ներկայացուցիչ, պատգամավոր Գ. Ղարաջյանը, իսկ հետո՝ ՀԺԿ խմբակցության կողմից՝ Գ. Տեր-Խաչատրյանը: Նրանք իրենց կուսակցությունների ու խմբակցությունների անունից հայտարարեցին, որ կառավարությունը դիմել է անօրինական քայլի, փաստորեն տեղի է ունեցել պետական հեղաշրջում, ուստի իրենք այսուհետև հրաժարվում են խորհրդի աշխատանքներին մասնակցելուց[33]: Հայտարարությունների ընթերցումից հետո, որպես բողոքի նշան, Ժողովրդական և Սոց.-դեմ. պատգամավորները ցուցադրաբար հեռացան խորհրդարանի դահլիճից: ՀԺԿ և Սոց.-դեմոկրատների օրինակին հետևեցին նաև էսէռները: Սոց.-դեմոկրատները և էսէռները, որպես բողոքի նշան, հրաժարվեցին խորհրդարանի աշխատանքներին մասնակցելուց ոչ թե նրա համար, որ իրենք էլ Ժողովրդականների նման պաշտպանում էին Պ. Նուբար փաշայի ղեկավարած արևմտահայ ազգային պատվիրակության տեսակետը տաճկահայ խնդրում, այլ, որ «ձախերը» առհասարակ չին ընդունում միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը:

Ստեղծված փակուղային իրավիճակում չէր մնում այլ բան, քան հաջորդ օրը՝ հունիսի 5-ին վաղաժամկետ դադարեցնել խորհրդարանի աշխատանքները և արագացնել նոր՝ ընտրվի խորհրդարանի ձևավորման աշխատանքները[34]: Այդ ժամանակ էլ Խորհրդի օրենսդրական

---

[33] Տե՛ս Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ), ֆ. 1022, ց. 2, գ. 121, թ. 1, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 399, ց. 2, գ. 118, թ. 1:

[34] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, թ. 56, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918—1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 61:

իրավունքները կրկին անցան գործադիր իշխանությանը՝ կառավարությանը:

Արդարև, որքան էլ ընդունելի կամ վիճելի լինեն այս ճգնաժամի հետ կապված հակամարտող կողմերի թեր կամ դեմ փաստարկները, մի բան պարզ է, որ այս ամենի հիմնապատճառն այն էր, որ Հայաստանը տակավին չուներ իր հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Հանրապետությունում սահմանադրության և այլ հիմնարար օրենքների բացակայության պատճառով մերթ խորհրդարանն էր խախտում իր իրավասության շրջանակները՝ ստանձնելով նաև գործադիր մարմնի ֆունկցիաներ, մերթ էլ կառավարությունն էր գործադիր իշխանությանը զուգահեռ ստանձնում օրենսդիր մարմնի լիազորություններ: Խորհրդարանի դերի նսեմացման և գործադիր իշխանության դերի աստիճանական բարձրացման միտումը ուժեղացավ հատկապես երկրորդ խորհրդարանի օրոք: Առաջին խորհրդարանն իր տասը ամիսների աշխատանքի ընթացքում, մեր հաշվումներով, ընդունել է 116 օրենք[35]:

---

[35] Տե՛ս «Հառաջ», 6 հունվարի 1920 թ., «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918—1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 38—61, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թթ. 32—36:

2. ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1919 թ. գարնանը, երբ Հայաստանի Հանրապետության վիճակը նկատելիորեն կայունացել էր, սահմանները ընդարձակվել էին, շինականն անցել էր խաղաղ աշխատանքի, օրակարգի հարց դարձավ նշանակովի խորհրդարանի արձակումը և ժողովրդական ընտրությունների միջոցով նոր, իսկական խորհրդարանի կազմավորումը: 1919 թ. հունիսի 21—23-ը տեղի ունեցած ընտրությունները բոյկոտեցին և դրանց չմասնակցեցին ժողովրդականները, ռամկավարները, սոց.-դեմոկրատները, բոլշևիկները և այլն:

Համաձայն ընտրությունների մասին օրենքի՝ դրանք անցման համամասնական՝ կուսակցական սկզբունքով և նախատեսված 80 պատգամավորական տեղերից 72-ը ըստ բաղեցրեց ՀՀ Դաշնակցություն կուսակցությունը[1]: Անշուշտ, ընտրությունների ժամանակ թույլ էին տրվել զանազան խախտումներ և զեղծարարություններ: Երկրորդ՝ ընտրվի խորհրդարանի բացումը տեղի ունեցավ առաջին խորհրդարանի բացումից ուղիղ մեկ տարի հետո՝ 1919 թ. օգոստոսի 1-ին: Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը*, կազմվեց նոր կառավարություն, ձևավորվեցին խորհրդարանի 12 հանձնաժողովներ: Ութ պատ-

---

[1] Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 3, թթ. 22—23, գ. 32, թ. 5, ֆ. 276, ց. 1,գ. 119, թթ. 98—99:

* Արտասահմանում գտնվելու պատճառով Ա. Ահարոնյանը չվարեց խորհրդարանի և ոչ մի նիստ:

գամավորներից կազմված ընդդիմությունից նույնպես ընդգրկվեցին հանձնաժողովներում[2]:

Օգոստոսի 15-ի նիստում լսվեց նորընտիր վարչապետ Սլ. Խատիսյանի կառավարության հայտագիրը: Նրանում ներկայացված էին նոր կաբինետի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու մոտեցումները: Հայտագրում պաշտպանվում էին միացյալ Հայաստանի անկախության, օտար ներդրումների խրախուսման, կալվածատիրական հողերի ազգայնացման, պարտադիր սկզբնական կրթության և այլ գաղափարներն ու պահանջները[3]: Խատիսյանի կաբինետի հայտագրին անվստահություն են հայտնում միայն էսէռները[4]:

Ռամկավար, կենսունակ պետության ամենաբնորոշ գծերից մեկը, անշուշտ, բազմակուսակցական հիմքի վրա իսկական ընդդիմության ձևավորումն էր:

Երկրորդ խորհրդարանի ընդդիմությունը, համեմատած առաջինին, շատ ավելի թույլ էր, քանզի 72 պատգամավորներից կազմված ՀՀԴ խմբակցությանը դիմակայում էին ընդամենը 4 էսէռ, 3 մուսուլման և 1 անկուսակցական (հետագայում՝ բոլշևիկ): Իշխող ՀՀԴ կուսակցությանը անհամանիր ընդդիմությունն ավելի լայն տեսանկյունով էր հանդես գալիս խորհրդարանից դուրս: Դրանք էին՝ բոլշևիկները, հայ ժողովրդականները, հայ ռամկավարները, մենշևիկները, անկախ սոցիալիստները, «սպեցիֆիկները», հնչակյանները :

Երկրորդ խորհրդարանի ընդդիմության թուլության բացը լրացվել է հիմնական կառավարող՝ ՀՀԴ խմբակցության ներսում առկա տարբեր թևերով ու հոսանքներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀԴ և նրա

---

2 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 32, թթ. 6—11, «Հայաստանի աշխատավոր», 14 օգոստոսի 1919 թ.:

3 Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 16 օգոստոսի 1919 թ.:

4 Տե՛ս «Սոցիալիստ հեղափոխական», 30 օգոստոսի 1919 թ.:

խորհրդարանական խմբակցության ներսում գոյություն են ունեցել ազգային, ընկերավարական, պետահրավական, հեղափոխական և այլ հակումներ ունեցող թևեր ու հոսանքներ[5]: Դա երևում է թեկուզ այն փաստից, որ իրավական, քաղաքական, տնտեսական, կադրային և այլ բնույթի խնդիրների քննարկումների ժամանակ ՀՀԴ խմբակցությունը մի քանի անգամ դրել է իր իսկ ձևավորած կառավարության վստահության հարցը[6]:

ՀՀԴ խորհրդարանական խմբակցությունը շարժափոկի դեր է կատարել կուսակցության բարձրագույն ղեկավար գործադիր մարմնի՝ Բյուրոյի և կառավարության միջև, ինչպես սահմանվել էր Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովում[7]: Խորհրդարանական խմբակցությունն էր այն հիմնական խողովակը, որով կուսակցությունն անցկացնում էր իր քաղաքականությունը, այսինքն՝ հիմնականում պահպանվել են պառլամենտարիզմի ժողովրդավարության սկզբունքները: Ասվում է հիմնականում, որովհետև արձանագրվել են նաև դեպքեր, երբ ՀՀԴ Բյուրոն, ուղղակի միջամտել է ՀՀԴ խմբակցության, խորհրդարանի և նույնիսկ կառավարության ներքին գործերին[8]: Դրությունը կտրուկ փոխվեց 1920 թ. մայիսին, երբ, քաղաքական հանգամանքների թելադրանքով, ՀՀԴ Բյուրոն խմբակցության առջև պահանջ դրեց իշխանությունը հանձնել իրեն:

---

5 Տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Ի, Լոս Անճելես, 1952, էջ 275, 342, Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, հ. Ե, Բեյրութ, 1966, էջ 113, Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները, Պեյրութ, 1968, էջ 17:

6 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գգ. 52, 57, «Ժողովուրդ», 8 հոկտեմբերի 1919 թ., «Սոցիալիստ հեղափոխական», 19 հոկտեմբերի 1919 թ.:

7 Տե՛ս Ս. Հակոբյան, ՀՀԴ 9-րդ ընդհանուր ժողովը, Երևան, 1994, էջ 22:

8 Տե՛ս ՀՀ ՀՔԿԳ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 114, թ. 1, «Ազգակ շաբաթօրյակ», 23 սեպտեմբերի 1973 թ.:

Երկրորդ գումարման խորհրդարանի օրենսդրական աշխատանքները, համեմատական կարգով, հաստուն էին ու արհեստավարժ:

Յուրաքանչյուր պետության ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նաև նրա դատական համակարգով և առաջին հերթին երդվյալ ատենակալների ինստիտուտի առկայությամբ: Նման համակարգի ձևավորման հարցը քննվել էր դեռևս Հայաստանի խորհրդում, որի նախաձեռնողն էր ՀԺԿ խմբակցությունը[9]: Ավելի ուշ այն հաստատվեց և դրվեց գործողության մեջ:

Խորհրդարանը որոշակի ուշադրություն դարձրեց նաև վերաշինության հարցերին: Մասնավորապես, 1920 թ. ապրիլին Երևանի հատակագծման և կառուցապատման նպատակով որոշվեց բացել 22904950 ռ. վարկ[10]:

1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթի վավերացմամբ հաստատվեց «Պետական լեզվի մասին» օրենքը: Համաձայն այս օրենքի հայերենը դառնում էր պարտադիր պետական և հասարակական բոլոր հաստատություններում[11]: 1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին ընդունվեցին օրինագծեր ազգագրական-մարդաբանական թանգարան, պետական հանրային գրադարան, թատերական վարժարան հիմնելու մասին, որոնք դրվեցին հանրային կրթության և արվեստի նախարարության իրավասության տակ[12]: 1920 թ. հունվարի 3-ին ընդունվեց օրենք՝ եկեղեցին պետությունից անջատելու մասին[13]: Ապրիլի 3-ին հաստատվեց մեկ այլ օրինագիծ՝ ծխական-եկեղեցական դպրոցները պետական աշխարհիկ

---

9 Տե՛ս «Կայծ», 5 դեկտեմբերի 1918 թ.:

10 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, թ. 12:

11 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 30:

12 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, թթ. 57—59, ֆ. 263, ց. 1, գ. 57, թ. 47:

13 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, թ. 1:

դարձնելու մասին: Միաժամանակ հայտարարվում էր խղճի ազատություն: Թույլատրվում էին ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական դպրոցները: Օրենքում պահանջ էր դրված՝ դպրոցը հեռու պահել քաղաքականությունից և այլն[14]:

Երկրորդ խորհրդարանի ընդունած օրենքներից ուշադրության է արժանի կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի նախաձեռնությամբ ներկայացրած օրինագիծը՝ «Հայաստանի ազատագրության կռվում զոհված զինվորների զավակներին անվճար դպրոցական պիտույքներ բաժանելու մասին», որը հաստատվում է 1920 թ. հունվարի 5-ին[15]:

Հարկ է նշել, որ այս խորհրդարանում ընդունված օրենքներն ավելի շատ ունեցել են սոցիալական ուղղվածություն, որով էլ ընդգծվում էր երկրի հիմնական քաղաքական ղեկավար ուժի՝ ՀՀԴ սոցիալիստական բովանդակությունը[16]:

Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի ամենախոցելի կողմերից մեկը ֆինանսներն էին: Խորհրդարանի կողմից թույլատրվող ֆինանսական հատկացումների հիմնական մասը գնում էր երկու կարևոր ոչ արտադրական ոլորտների՝ բանակի և գաղթականության գոյությունն պահպանման ուղղությամբ: Կառավարության և հատկապես Բ. Բորո-կառավարության տնտեսապես չհիմնավորված ֆինանսատնտեսական քաղաքականության հետևանքով (խորհրդարանը տնական, հարկադիր արձակուրդում էր) հայկական դրամն արագորեն արժեզրկվեց և երկրում փաստորեն առաջացավ ֆինանսատնտեսական ճգնաժամ:

---

14 Տե՛ս Նույն տեղում, թ. 40, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 240:

15 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, թ. 44, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 72:

16 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 32, թ. 22, գ. 57, թ. 3, ֆ. 202, ց. 1, գ. 339, թ. 6, ֆ. 207, ց. 1, գ. 49, մաս 2, թ. 56, գ. 114, թ. 6, գ. 116, թ. 61 և այլն:

Օրենսդրական աշխատանքի կտրվածքով խորհրդարանի՝ տեսանդաշտում էին արևմտահայերի ներգաղթի, բանակի զորացման, Արցախին օգնություն ցույց տալու խնդիրները: Բազմաթիվ անգամներ վարկեր են բացվել բանակի համար, երբեմն առանց նախահաշիվների: Փորձ է արվել ստեղծել սեփական ռազմական արտադրություն[17]: Ղարաբաղի 8 մլն ռուբլի հիմնադրամից 1,5 մլն-ը հատկացվեց «Ղարաբաղի զորամաս» կազմակերպելու համար[18]:

Պատգամավորների գործունեությունը չի սահմանափակվել միայն խորհրդարանի շրջանակներում: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ խորհրդարանում պատգամավորները անհատական կամ պատգամավորական հանձնախմբերով գործուղվել են տարբեր շրջաններ, տեղերում ուսումնասիրել, հետո առաջարկություններ են ներկայացրել և այլն:

Հանրագումարի բերելով երկրորդ գումարման խորհրդարանի օրենսդրական աշխատանքի արդյունքները՝ կարելի է ասել, որ 1919 թ. երկրորդ կեսին՝ օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, հրավիրվել է 56 նիստ և այդ ընթացքում հաստատվել ընդամենը 117 օրենք, այդ թվում՝ մի բանի որոշում, իսկ 1920 թ. հունվարի 2-ից մինչև մայիսի 5-ը տեղի է ունեցել 32 նիստ և այդ ընթացքում ընդունվել 85 օրենք: Այսպիսով, երկու տարեշրջանները միասին ընդունել են շուրջ 200 օրենք[19]:

Երկրորդ խորհրդարանի գործունեության վերջին յոթը ամիսները կարելի է համարել որպես անգործության ժամանակաշրջան: Երբ 1920 թ. Մայիսյան ապստամբու-

---

17 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 9, «ՀՀ օրենքների հավաքածու», ա. տ. և թ., էջ 22—23:

18 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թթ. 15, 132:

19 Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, թթ. 1—22, գ. 52, ֆ. 202, ց. 1, գ. 333, թթ. 70—160, «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ.», էջ 1—93 և «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 1—72 (հաշվումները կատարված են մեր կողմից):

թյան կապակցությամբ խորհրդարանն ուղարկվում է հարկադիր ու տևական արձակուրդ, դրանով էլ, փաստորեն, դիմազրկվում: ՀՀԴ Բյուրոն, հանրապետության քաղաքական իրավիճակը գնահատելով ճգնաժամային՝ մայիսի 5-ին ստանձնեց կառավարությունը: Արձակուրդ ուղարկելով խորհրդարանը՝ նա յուրացրեց նաև օրենսդրական իրավասությունները: Փաստորեն հաստատվեց ՀՀԴ Բյուրո-կառավարության դիկտատուրա: Թեև Բյուրո-կառավարությունն իր ընդունած մի շարք խիստ օրենքներով և վճռական պատժիչ գործողություններով ճնշեց թալանչիկների ապստամբությունը, սակայն իրավաքաղաքական տեսակետից երկրում կատարվեցին ժողովրդավարական սկզբունքների մի շարք խախտումներ, որոնք թուլացրին պետականության հիմքերը: Դրան գումարվեց նաև թուրք-հայկական պատերազմը, որի արդյունքում Հայաստանը պարտվեց և չունենալով այլընտրանք՝ ընդունեց 11-րդ Կարմիր բանակի մուտքը երկիր և խաղաղ ճանապարհով խորհրդայնացվեց:

ՀՀ գոյության վերջին՝ նոյեմբեր ամսին, խորհրդարանը գումարեց ընդամենը չորս նիստ, որոնցում հիմնականում լսվեցին պատերազմի ու խաղաղության և «ձախ» կոալիցիոն կառավարության ստեղծման մասին հարցերը: Այդ ճակատագրական պահին էլ հայ քաղաքական շրջանները ու ժողովուրդը իրենց փրկության վերջին հույսը կապեցին Խորհրդային Ռուսաստանի հետ: Վիճակն այնքան բարդ էր ու ճգնաժամային, որ պառակտվեցին ՀՀԴ շարքերը: Դրա հետևանքով էլ առաջացավ «Ձախ դաշնակցականների» խումբը:

Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագրի հարցը լսվել է նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին՝ երեկոյան ժամերին: ՀՀԴ խորհրդարանական խմբակցության մասնակցությամբ կայացած խորհրդակցությունում հիստերում, ձայների ճնշող մեծամասնությամբ, որոշվեց էր

խաղաղ ճանապարհով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և երկիրը խորհրդայնացնել[20]: Հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունն ընդունեց պահի լիջությունը և ընդունեց բոլշևիզմը, քանզի ռուս-բոլշևիկ անվան տակ հասկանում էր միայն Ռուսաստան և ռուս ժողովուրդ: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանի համաձայնագրի ստորագրումով իրավապես իր ուժը կորցրեց նաև ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը:

Սկիզբ այս ձևով Հայաստանի խորհրդարանական-ռամկավարական հանրապետությանը փոխարինելու եկավ Խորհրդային Հայաստանը: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության իրավահաջորդ Խորհրդային Հայաստանը, իր հակասականությամբ հանդերձ, դարձավ հետագա հայ պետականության միակ կրողը, համայն հայության հայրենիքը, նրա ֆիզիկական, հոգևոր ու մշակութային վերընձյուղման միակ հուսալի երաշխավորը:

---

20 «Հայրենիք», 1923, թիվ 1, էջ 70—72, 1954, թիվ 5, էջ 10—11, «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 240—241, «Սապարզ», 28/29 մայիսի 1992 թ.:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հայաստանի առաջին հանրապետության քաղաքական համակարգի անբաժան մասն է կազմել խորհրդարանը, որը ձևավորելիս հաշվի էր առնվել պառլամենտարիզմի համաշխարհային փորձը:

Հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում կազմվել է երկու գումարման խորհրդարան՝ առաջինը, որպես Հայոց Ազգային խորհրդի անմիջական իրավահաջորդ, գործել է 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը, բազմակուսակցական հիմքի վրա, առանց ընտրությունների, իսկ երկրորդը՝ 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, համամասնական ընտրությունների միջոցով: Այդ նույն ժամանակ կազմվել է չորս կառավարություն (կաբինետ): Հայաստանի երկու գումարման խորհրդարանն իր գործունեության ընթացքում ընդունել է 300-ից ավելի օրենքներ, որոնց զգալի մասը, ասկայն, եղել են ընդամենը որոշումներ և կառավարչական հրահանգներ:

1919 թ. կեսերից արդեն Հայաստանը կազմակերպված պետություն էր, ուներ իր ազգային դրոշը, զինանշանը, օրհներգը, դատաբանական համակարգը, տեղական ինքնակառավարման մարմինները (զեմստվոներ), բանակը, դիվանագիտական կապերը, դրամանիշը, ազգային-պետական, կրթամշակութային օջախները և այլն: Հանրապետության ներսում և խորհրդարանում գոյություն է ունեցել բազմակուսակցական համակարգ: Գործել են խմբակցություններ, եղել է ընդդիմություն, թույլատրվել են այլախո-

հությունն, խղճի, խոսքի, մամուլի, ժողովների, ցույցերի, գործադուլների ազատություններ և այլն:

Քաղաքական և պետական կառուցվածքի տեսակետից՝ հանրապետության խորհրդարանն ու կառավարությունը հպատակ էին դրել Հայաստանը դարձնել Արևմուտքի տիպի խորհրդարանական, դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությանը բնորոշ էր կառավարման հանրապետական ձևը՝ խորհրդարանի գերակայությամբ: Հայաստանը՝ որպես խորհրդարանական դեմոկրատական հանրապետություն, ծրագրել էր Հայկական հարցի բարենաչդող լուծումից հետո մշակել և ընդունել սահմանադրություն: Սկզբում պետական իշխանության գլխավոր իրավասությունները՝ օրենսդիր, մասամբ նաև գործադիր, պատկանել են խորհրդարանին: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ձևավորվել ու հաստատվել է խորհրդարանի կողմից: Հանրապետության նախագահի պաշտոնի բացակայության պայմաններում վարչապետը հաշվետու էր միայն խորհրդարանի առջև: Սակայն ժամանակի ընթացքում, դեպքերի ու հանգամանքների բերումով, սահմանադրության բացակայության, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավասության շրջանակների ոչ հստակ տարանջատվածության և սուբյեկտիվ այլ պատճառներով գնալով նսեմացվեց խորհրդարանի դերը՝ հօգուտ կառավարության: Իսկ 1920 թ. Մայիսյան ապստամբության կապակցությամբ պետական կառավարման համակարգը կուսակցականացվեց (ողջ իշխանությունն անցավ ՀՀԴ Բյուրո-կառավարության ձեռքը): Կառավարությունը ստանձնեց նաև օրենսդրական ֆունկցիաներ: Դրա արդյունքում խորհրդարանն ուղարկվեց հարկադիր արձակուրդ ու փաստորեն չեզոքացվեց:

Խորհրդարանի դիմազրկումը և հետագայում ամբողջ իշխանության ՀՀԴ Բյուրո-կառավարության ձեռքում կենտրոնացնելը պայմանավորված էր մի կողմից Դաշ-

ճակցություն կուսակցության ներսում առկա անառողջ, մենիշխանական, հեղափոխական տրամադրություններով, իսկ մյուս կողմից՝ պատմական իրադարձությունների այն իրական ու օբյեկտիվ հանգամանքներով, որոնց մեջ գտնվել էր Հայաստանը տվյալ ժամանակաշրջանում: Հայաստանի խորհրդարանի պատմության էական դասերից մեկը պետք է համարել այն, որ խորհրդարանի դերի ամեն մի նսեմացում առաջ է բերում, տվյալ երկրում, ժողովրդավարության հետընթաց: Ավելին, խորհրդարանի դերի նսեմացումը զգալիորեն թուլացրեց հայոց պետականության հիմքերը:

Առաջին հանրապետության քաղաքական համակարգի փորձի ուսումնասիրությունը հուշում է, որ մերօրյա Հայաստանի համար նույնպես նախընտրելի է խորհրդարանական գերակայության հանրապետությունը: Բոլոր դեպքերում նախագահի ու նախագահական իշխանության նկատմամբ ազնիվ ու արդար ճանապարհով ընտրված խորհրդարանը կարող է ավելի զորավոր երաշխիք լինել և՛ օրենքի գերակայության, և՛ ժողովրդավարության ամրակայման, և՛ հնարավոր բացթողումները ու սխալները կանխելու համար:

ՀՀ գործող քաղաքական կուսակցությունների, մասնավորապես նրանց խորհրդարանական գործունեության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբ հայ ժողովրդին ու նրա հայրենիքին արտաքին ու ներքին մեծ վտանգ էր սպառնում, տեղի էր ունենում հայ քաղաքական գրեթե բոլոր ուժերի, բացառությամբ համայնավարների, համախմբում (կոնսոլիդացիա), իսկ երբ թուլանում կամ վերանում էր այդ վտանգը, կրկին ուժեղանում էին ընդդիմությունն ու ներքաղաքական պայքարը կուսակցությունների միջև: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ համազգային ու համապետական շահի գիտակցման այս առողջ ավանդույթը պահպանվում է նաև մեր օրերում՝

հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործելակերպում:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեության պատմաքննական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք չեն եղել պարզունակ և միատարր համախոհների կազմակերպություն, այլ դրանց ներսում (սկսած Դաշնակցությունից և վերջացրած բոլշևիկներով) գոյություն են ունեցել «աջ» և «ձախ» հոսանքներ ու թևեր, փափուկ և կոշտ մարտավարության կողմնակիցներ:

Անշուշտ, արհեստավարժ չէր Հայաստանի խորհրդարանը: Իր կարճատև և ընդհատումներով գործունեության ընթացքում նա չհաջողեց մշակել ու ընդունել սեփական, ազգային դիմագծին ու առանձնահատկություններին հոգեհարազատ պետահիրավական ամբողջական ու կայուն օրենսդրություն:

Թեև Հայաստանի Հանրապետությունում պակասում էին շատ օրենքներ, դրսևորվում էին անիշխանության երևույթներ, չարաշահումներ, «մաուզերիզմ» և այլն, բայց և այնպես, իր ամբողջության մեջ վերցրած, բոլոր հիմքերը կան պնդելու, որ 1918—1920 թթ. Հայաստանը **կազմակերպված պետություն էր:**

Ուսումնասիրության արդյունքներով հանգել ենք այն եզրակացության, որ, իր թերություններով հանդերձ, իրավաքաղաքական և տնտեսական տեսակետից Հայաստանի Հանրապետությունը հիմնականում ժողովրդավարական տիպի հանրապետություն էր: Հայաստանն ուներ իր պետականությունը՝ անկապտելի բոլոր հատկանիշներով: Բայց ժողովրդավարության բովանդակության տեսակետից ՀՀ կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի. առաջին՝ 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. ապրիլը, երբ Հայաստանը հիմնականում ժողովրդավարական հանրապետություն էր և երկրորդ ժամանակաշրջան՝ 1920 թ. մայիսից մինչև դեկտեմբերի 2-ը, երբ այն այլևս չէր կարելի համարել ժողովրդավարական: Ժողովրդավարության հիմ-

քերի խաթխլումը, անշուշտ, դարձալ հանրապետության անկման պատճառներից մեկը, բայց ոչ գլխավորը: Հայաստանի Հանրապետության անկման գլխավոր պատճառը արտաքին ուժերն էին: Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի և քաղաքական կուսակցությունների մաքառումների փորձը օգտակար և ուսանելի է այսօրվա Հայաստանի անկախ պետականության ամրակայման ու զարգացման, նրան ժամանակակից չափանիշներով ժողովրդավարական բովանդակությամբ հագեցնելու գործում:

Հայաստանի առաջին անկախ հանրապետության անկումից հետո էլ, դրան հաջորդած խորհրդային 70 տարիների ընթացքում, հայ ժողովրդի մեջ բնավ չմարեց անկախության ոգին, վկան՝ Հայաստանի ներկայիս հանրապետությունը: Հայոց անկախ պետականությունը պետք է հանդիսանա հայ ազգային գաղափարախոսության հիմնասյուներից մեկը:

Այսօր նոր՝ երրորդ հազարամյակի նախաշեմին, փոփոխված աշխարհում մեզ համար առաջնային պետք է լինի ոչ թե մեր ժողովրդի սոսկ ֆիզիկական գոյատևման հիմնահարցը, այլ հայոց պետականության շրջանակներում և նրանից դուրս հայ ժողովրդի զարգացման ու բարգավաճման խնդիրը, նրա ազգաշահ բաղձանքների իրագործումը: Արդ, ժամանակն է պետականորեն մտածելու և գործելու, քաղաքակիրթ աշխարհին ցույց տալու հայ ժողովրդի աբարդ ներուժը, կենսունակությունը, հավերժելու անկոտրում կամքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1 Հաշատանի առաջին խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 11

2 Երկրորդ խորհրդարանը և կուսակցությունները . . . 28

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ 36

[350 пр.]

A II
84736